



ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ 4ը հրատարակուի ի կ. Պոլիս, ամէն ամսոյ 1ին և 15ին:
Հասցէ՝ կ. Պոլիս, Ղալաթիա նորատունիկեան խան:
Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարսյ:

Բաժանորդագիրն
Պոլիս, տարեկան
Գաւառները,
Օտար երկիրք:

մէկ մէծիտ:
մէկ քառորդ ոսկի:
վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երազ մըն ալ իրականութիւն եղաւ. ունեցանք եկեղեցական վարժարանին: Արմաշի բարձունքներու վրայ այժմ կը գտնուի տնկարան մը ուր ծլին պիտի եւ ուսանան մատղաշ ծառատունկեր որք որ մը հաստարմատ ծառեր ըլլալով «Հոգեկան անունդ պիտի ջամբեն մեզ»: Այլ սակայն որպէս զի բազմաւորութիւն ունենանք այդ գրդարանի երախայրիքը վայելելու, պէտք է որ բոլորին գէթ տասըն և հինգ տարիներ: Այս հաշիւ չափազանցեալ է. առաջին դասի աշակերտները որք 1889 սեպտեմբեր 18 ին սկսան կրթուիլ, հոգեւոր ուսանողութեան ծրագրի համեմատ չըջանաւարտ պիտի ըլլան ութ տարի յետոյ: Բայց կարելի է ենթադրել որ այդ երիտասարդ աբեղայները երբ դպրոցի դռնէն դուրս ստորդին, անդէն և անդ կարենան մեր խոստտուն առաջնորդներն հանդիսանալ: Դպրոցէ դուրս քիչ մ'ալ աշխարհ ձանձնալ, կեանքի փոր-

ձառութիւն ունենալ, ալէկոծութիւններէ անցնիլ, վերջապէս «մարդ ըլլալ» անհըրաժեշտ պայմաններ են որպէս զի թէ՛ ինքզիրենք ու թէ՛ ժողովուրդը կառավարել սորվին: Տարակոյս չկայ թէ է՛ն բարեյաջող հանգամանքներով իսկ հազիւ թէ 20րդ դարի մէջ պիտի կարենանք վայելել Արմաշեցի վարդապետներու խնայտուն առաջնորդութիւնը:

Սակայն այդ վարժարանի բացումն առ այժմ անմիջական օգուտ մը ունի, որ է ազգին հոգածութիւնը հրաւիրել եկեղեցականութեան վրայ: Արդարեւ չափ տարիներէ ի վեր ամէն խելահաս հայ կը դիտէ թէ մեր եկեղեցականութիւնը թէեւ տակաւին ունի ներքին բարոյական զօրութիւն մը սակայն այդ զօրութիւնն սկսած է նուազիլ, և պիտի գայ որ մը որ այլ ևս հայ եկեղեցականներն իրենց ժողովուրդի պէտքերը դոհացնելու անկարող պիտի ըլլան: Այդ երկիւղալի ապագային ուրուականը խռովեց մտքերն ու հոգիները. ամէն կողմէ սկսան փախալ թէ ի՞նչ ընելու է. ձայներն հետզհետէ բարձրացան, եւ վերջապէս «ի՞նչ ընելու է»ն գտան: Եկեղեցական վարժարան մը պէտք է հիմնել ըսին, ու եկեղեցական վարժարանը հիմնեցաւ:

Այլ կը բաւէ՞ այդ միակ վարժարանը

որպէս զի անվրդով դիտենք ապագան, կատարելապէս վստահ ըլլալով թէ եկեղեցականութեան այդ ապագան փրկուած է: Կը կարծենք թէ տխրամարտութեան վերջին խօսքն է այդպիսի մտածութիւն մը ունենալ:

Ուսեալ երիտասարդութիւնն օր ըստ օրէ հեռու կը փախչի եկեղեցական ասպարեզէն: Ալ այժմ տարօրինակ նորութիւն է մեր մէջ տեսնել հիմնաւոր ուսում ստացած երիտասարդ մը որ փափաքի վարդապետ ձեռնադրուիլ, մանաւանդ տէրտէր: Այս տխրատեսիլ երեւոյթէն դատելով կարող ենք ստանց շատ խաբուելու գուշակել թէ նոյն իսկ Արմաշի ուսանողներն երբ զգան թէ իրենց գլուխը բաւական զարգացած է պիտի դժկամակին յանձնել զայն վեղարի մը պահպանութեան:

Այո՛, կայ ջլատիչ հիւանդութիւն մը որ կ'արգիլէ ուսեալ երիտասարդութիւնը եկեղեցիի պաշտօնեայ ըլլալ: Ի՞նչ են այդ հիւանդութեան պատճառները, ի՞նչ այդցաւին դարմանը: Մինչեւ չորոնենք հիւանդութեան պատճառները, մինչեւ չը գտնենք դարմանը, ո՛չ Արմաշ, ո՛չ ուրիշ մի քանի Արմաշներ կարող են տալ մեր եկեղեցիի այն պաշտօնեայներն որոց ա՛յնքան կարօտ ենք: Մեր համոզումն այն է թէ առաջին պարտականութիւնն իսկ է այս վիճակը մեր հոգածութեան նուարկայ ընել: Ո՛րք էր թէ այրած սրտով եկեղեցականները, որք սակաւաթիւ չեն, իրենց ցաւերու պատճառներն, իրենց դառնութեան մաղձի թոյները հրապարակ հանեն: Ամէն ինչ սրարդ տեսնենք և խորհինք չարիքը բառնալու միջոցներու վրայ:

Փափագելով և սպասելով որ մեր եկեղեցականները, գէթ անոնցմէ մի քանին որք այսօր հանգստեան այնքան ժամեր կը վայելեն, հաճին իրենց հոգածութիւնը նուիրել այս խնդիրներու, մենք կուգանք պարզօրէն խօսիլ և յայտնել թէ մեր եկեղեցական մարմնի կազմակերպութիւնը շատ յոռի է, և հիմնական յեղաշրջումի կարօտ է: — Ամէն հանրային հիմնարկութիւն որ հաստատուած է անիրաւութեան կռուանին վրայ պէտք է որ ստրսի, և անարդարութիւնը տհաքին տեղ դրաւած է մեր եկեղեցական մարմնի կազմակեր-

պութեան մէջ: Ամէն փառք, ամէն պատիւ, ամէն օգուտ, ամէն հրապոյր պահած ենք ամուրի եկեղեցականութեան. ամէն տառապանք, ամէն յոգնութիւն, ամէն զրկանք, ամուսնացեալ եկեղեցականութեան համար է: Եւ սակայն ի՞նչ մեծ անջրպետ այն ծառայութիւններու մէջ զորս կը մատուցանեն ամուրի եւ ամուսնացեալ եկեղեցականութիւնը:

Կրօնքի և եկեղեցիի ճշմարիտ սպասուորներներն ու պահապաններն ամուսնացեալ եկեղեցականներն են, վասնզի անոնք են որ կոչում ունին, եթէ ներքի է այսպէս ըսել. կրօնքը դործնական ընել և մեր կեանքի հետ սերտ կապով կապել: Ամէնքս ալ մեր ուրախութեան ու վշտի պատկերներու քով տէրտէրը կը տեսնենք: Տէրտէրը մեր ծննդեան օրը, տէրտէրը մեր ցաւերու անկողինն քով, տէրտէրը մեր սիրելիներու գերեզմանին շուրջը, տէրտէրը որ զմեզ ամէնքս դադաղը կը դնէ, տէրտէրը որ մեր ցաւերը կը լսէ, մեր վշտերը կը մխիթարէ, կեանքի մէջ մեր խզձի բեռը կը թեթեւցնէ. վերջապէս տէրտէրին կեանքն ու ժողովրդին կեանքը միասին խառնուած են, ի մի ձուլուած են, իրարմէ անբաժան են:

Ի՞նչ է կրօնքի կոչումը: Ազնուացնել ժողովուրդը, մխիթարել զնա իր թշուառութիւններուն մէջ և գերեզմանէն անդին ցոյց տալ ապագայ մը որ տառապանքներու վախճանն է. ու տէրտէրն է որ կրօնքի այս նպատակը պիտի դործադրէ: Տէրտէրը կը նմանի ընկերական այն առաքեալներու որք իրենց գաղափարը ժողովրդին մէջ տարածելու համար կը մտնեն ընկերութեան ամէն խաւերը: Ապարանքէն խրճիթը կ'երթան, զինեւտունէն դործատունը, ագարակէն վաճառատունը. տէրտէրն ալ ամէն ուրեք է:

Եւ ի՞նչ մեծ տալանորութիւն կը թողու նա եթէ ունի մեծ սիրտ մը, ազնիւ ոգի մը ու մշակեալ միտք մը: Եւ ի՞նչպէս տէրտէրը մեծ սիրտ ունենայ, ազնիւ ոգի ունենայ, մշակեալ միտք ունենայ, երբ իր կեանքը ժողովրդի համար նուիրելէ յետոյ, խոնջ ու յոգնած, մօրութեւ սպիտակացած, նա պարտաւոր է իր գլուխը խոնարհեցնել ո՛րեւ պատանի վարդապետի մը առջեւ որ դպրոցէ մը դուրս

կ'ելլէ։ Ի՞նչու խոնարհի։ Վասնզի այդ երկտաւարդը չէ ամուսնացած։ Ահա՛ իր առաւելութիւնն՝ որու առջեւ ոչինչ են ամէն զոհողութիւն, ամէն տառապանք, ամէն զրկանք։

Այո՛ տէրտէրն է որ ամէն առաւօտ կանուխ մութին պէտք է երթայ եկեղեցին սպասաւորէ, ժողովուրդը հովուէ, անոր մեղքերը լսէ։ Իրիկունները եկեղեցին գտնուի հսկէ, եւ օր մը երբ Զատիկ է, Ծնունդ է, տօն է, այդ օրը ինքն արժանի չէ պատարագել, պէտք է վարդապետ մը դայ։ Ինչո՞ւ։ Վասն զի այդ վարդապետը ամուսնացած չէ։ ամէն ծառայութիւն կը մթաղենի այդ մեծ զոհողութեան հանդէպ։

Հիւանդին մահճին քովը տէրտէրը պիտի երթայ։ անոր ակամք կրնայ շատ տառաւորօտիկ ըլլալ, բայց տէրտէրը պէտք է երթայ, զինուոր է։ իր անձը պէտք է մարտիրոս ընէ, այս իր պարտքն է։ Հոգեվարքին հոգիին բեռը պէտք է թեթեւցնէ, անոր պէտք է յաւիտենականութեան ու հանդերձեալ կեանքի յոյսը տայ, այժմէն Քրիստոսի հետ կապէ պնտ։ Թէ աղքատ է այդ մեռնողը՝ տէրտէրը միայնակ կարող է ընկերանալ անոր դաշտին։ Իսկ թէ փոքր ինչ հարուստ է, պէտք է նսեմանայ տէրտէրը։ օ՛հ յառաջ վարդապետ, քարոզէ, փառաւորուէ, ամէն փոխարինութիւն քեզ համար պահուած են։ Վասնզի դու կին չես ճանցած յաջս աշխարհի։ տէրտէրն երէց կին ունի, զաւակ ունի, վտանգը իրեն համար վնասակար չէ։

Վարդապետին՝ քարոզչութիւնը, առաջնորդութիւնը, եպիսկոպոսութիւնը, պատրիարքութիւնը, կաթողիկոսութիւնը, իշխանութիւնը։

Եկեղեցական այսպիսի կազմակերպութեան մէջ բնականաբար տէրտէրութեան կրնան կոչուիլ միայն անոնք որք ապրելու չունին ուրիշ միջոց։ ասոնց մէջ շատ անգամ բարեսիրտ անձինք կրնան զբոսնուիլ։ բայց խեղճ, ողորմելի եւ ուսմիկ զգացումներով տողորուածները կը կազմեն ստուար մեծամասնութիւնը։ և ուրիշ հաւաքում անհնարին է։ Եւ երբ այսպիսի մարդիկ են ժողովրդի հոգեւոր հայր ու ուղեցոյց, երբ ասոնք են որ օրինակ

պիտի հանդիսանան, ի՞նչպէս կարելի է ենթադրել թէ ժողովուրդը, մանաւանդ տղէտ ամբողջն որ միշտ մեծամասնութիւն է, փարի իր եկեղեցիին, սիրէ իր կրօնքը։ Եթէ մեր մէջ եկեղեցին տակաւին բաւական զօրաւոր է, այդ շնորհիւ աւանդութիւններու է, և աւանդութիւններն ալ հետզհետէ կրնան տկարանալ։

Առանց խարուելու ամէն ոք կրնայ ըսել որ ժողովուրդը հիմնովին կերպարանափոխ կ'ըլլայ եթէ իրեն առաջնորդ ունենայ առաքինի, ազնիւ, ուսեալ քահանայներ։ և այս յատկութիւններով օժտեալ անձինք կրնան քահանայութեան կոչուիլ եթէ հաշմողուած ըլլան որ սարկութեան պիտի չդատապարտուին, անարդարութեան զոհ պիտի չըլլան։

Իսկ ի՞նչ են ամուրի կղերին առ ազգն ու եկեղեցին մատուցած ծառայութիւնները զոր ամուսնացեալ կղերն անկարող է կատարել։ Ոչինչ։ Ինչպէս ամուսնացեալ աշխարհականեր ամէն պաշտօն կրնան ստանձնել առանց ո՛րեք անպատեհութեան, նոյնը և ամուսնացեալ կղերը կարող է ընել։

Արդարեւ եղած է ժամանակ մը յորում անհրաժեշտ համարուած է ունենալ ամուրի եկեղեցականութիւն մը որ աշխարհի հետ սերտ կապերով կապուած չըլլալով կարենայ դժնդակ պարագայներու մէջ նուիրել իր անձն աղքին ու եկեղեցիին։ Այդ պարագայները փոխուած են։ Վերցուած են այժմ՝ այն պատճառներն որք անհրաժեշտ կ'ընծայէին ամուրի եկեղեցականութեան մենաշնորհը։ պատճառներու հետ պէտք է ջնջուի և մենաշնորհը։

Անշուշտ պիտի առարկուի թէ կաթողիկոսութեան մէջ կուսակրօն եկեղեցականութիւնը մեծ ոյժ է։ Իրաւացի կէտեր ունի այդ առարկութիւնը, բայց մոռնալով չէ որ ամուրի եկեղեցականութիւնը մեծապէս նպաստեց բողոքականութեան ծրնունդի ու ծաւալումի։ և յետոյ, կաթողիկոսութեան մէջ եկեղեցականութիւնը երկու դասի չէ բաժնուած։ կաթողիկոսութեան մէջ ամուրի եկեղեցականութիւնն է և ամուսնացեալ եկեղեցականութիւնն չկայ։ ամէն սարկաւագ կրնայ պապ ըլլալ։ ոչ մէկին անիրաւութիւն կայ։ ո՛չ ոք զոհ է հիմնարկութեան պահանջողութիւններուն։

բոլոր եկեղեցականները հաւատար են պարտքի և իրաւունքի հանդէս :

Եթէ մամուլը եւ հանրային կարծիքը լրջօրէն սկսին զբաղիլ եկեղեցականներու վիճակի բարենորոգման խնդրով, փորձով պիտի համոզուին, չնորհիւ մանրակրկիտ ուսումնասիրութեան, թէ՛ անհրաժեշտ պայման է պատուական եկեղեցականութիւն մը ունենալու համար ջնջել այն պատանշը որ կը կանգնի ամուսնացեալ եկեղեցականութեան հանդէս . թէ՛ պարզ տէրտէրը պէտք է կարենայ բարձրանալ մինչև կաթողիկոսութիւն : Այն ատենն է միայն որ պերճախօս, ուսեալ, բարի եկեղեցականներու գունդ մը պիտի կարենանք ունենալ :

Ամուրի եկեղեցականութիւնը զոհելու առաջարկ չենք ըներ . քանի որ վանքեր ունինք, ամուրի եկեղեցականներ ալ կրնանք ունենալ . միայն թէ ամուրի եկեղեցականները մեր եկեղեցիի կազմակերպութեան բացարձակ տէրն ընելու չենք : Ամէն անոնք որ յուսախաբ են, որ տրամութիւն ունին, որ կոչում ունին, թո՛ղ քաշուին մենաստաններու մէջ . թո՛ղ իրենց սրբութեամբն ու տաղանդովը գրաւեն ազգի սէրն ու համարումը և իրենք ալ բարձրանան ամէն բարձր պաշտօններու . այժմ ի հարկէ ստիպեալ զանոնք կը հրաւիրենք մեզ եպիսկոպոս, պատրիարք ու կաթողիկոս ըլլալ . այն ատեն պիտի հրաւիրենք իրենց արժանիքին համար, իրենց իրական սրբակրօնութեան համար :

Եկեղեցական վարժարանի հիմնարկութեան առթիւ այս տեսութիւններն ընելով կը կարծենք թէ ամէն անոնք որ մեր բարոյական զարգացումի խնդիրներովը կ'զբաղին համոզուած են թէ ի՛նչ մեծ է եկեղեցական դասի ազդեցութիւնը մեր ժողովրդի բարոյական կեանքի վրայ, հետեւաբար այդ խնդիրն ալ յուզելու, քննելու, հասարակաց կարծիք պատրաստելու կը հետամտին :

Մեր եկեղեցիի բաղդը ազգին ձեռքն ըլլալով ամէն բարեփոխութեան համար հարկ է որ հասարակաց կարծիքը սլաութաւորուի : Այլ ժողովուրդը միշտ յամառ է եկեղեցական բարեփոխութիւններու մասին, նոյն իսկ երբ կրօնքի կամ հաւատքի խնդիր չկայ : Տեսակ մը նախա-

պաշարում կը կաշկանդակէ շատ անգամ ամենէն աւելի անկախ մտքերն, ուր մնաց ժողովուրդը : Եթէ այժմէն իսկ ձեռնարկենք այս խնդիրներն ուսումնասիրելու, երկար տարիներու կարօտ ենք անոնց լուծումը տեսնելու, և հաւանական է որ 20րդ դարի մէջ Արմաշի սաները տակաւին այնպէս գտնեն մեր եկեղեցական կազմակերպութիւնը ինչպէս այսօր է : Բայց ինչպէս որ քսան տարի վերջ լաւ եկեղեցականներ ունենալու համար այժմէն դպրոց կը հիմնենք, նոյնպէս նաեւ կէս դար վերջ — եթէ կ'ուզէք ըսենք մի դար վերջ — եկեղեցական սահմանադրութեան մէջ հիմնական փոփոխութիւններ կարենալ ներմուծելու համար այժմէն աշխատիլ կանուխ չէ :

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԴՐԱՅՈՒՅԻՆ

ԱՌ Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Այն իրիկունը՝ Սկիւտարի վերջին շոգենաւին ստորնայարկի սրահն էի :

Դեկտեմբերի ամպրոպայոյզ իրիկուն մըն էր . անձրեւը կը տեղար մեծակայլակ ու մենակերպ, և մութ կապարադոյն կոհակներուն զարնուելով՝ եռացող պղպղակներու խուլ շառաչին մը յառաջ կը բերէր : Հովին — անձրեւի յաւիտենական թշնամուոյն — յորձանքները կուգային անընդհատ խառնակել ու աւրջակել այն ջրեղէն կանոնաւոր սիւներն որք միութեան անհատնում դժեք կը յօրինեն՝ երկնքէն մինչեւ երկիրը ձգուած :

Շատ քիչ բան ծանօթ է ինձ այնքան սաստկապէս մեկամաղձիկ որչափ վերջին շողեհաւու մը ստորնայարկը, մանաւանդ այդ տեսակ օդով մը : Մեծ մասամբ շուկայի մարդիկ են անդ նստողները, յոգնած դադրած, ստեւեայ բազմոցներուն վրայ փռելով իրենց մարմնոյն խոշոր խոնջիքը : Տեսակ մը արհեստական գիշեր կը տիրէ այնտեղ, որուն լուսինն է ձեղուէն կախուած լամպարն՝ իր գեղնաշորթ պլալուքով, և որուն աստղերը կը կազմեն գլանիկի ծայրերն որք սրահին ամէն կողմէն կը ծակեն այդ խաւարը : Ո՛չ լրա-

գիր կը կարգան հոն, և ո՛չ կը խօսին ու կը խնդան բարձրաձայն. իւրաքանչիւր ոք, իր մտածմանցը մէջ խորատու, անհամբեր իր ընտանեկան յարկն երթալու ի գլուխ վառարանին, անսահման յոգնութեան նայուածքներ կը պտտցնէ չորս բոլորքը։ Անգիտակից թմրութիւն մը կը պատէ գեղջ այդ եղի մթնոլորտին մէջ, որ գեղջ քու մէջդ կ'ամբիօրէ եւ ներքին աշխարհ մը կ'ստեղծէ քեզ համար։

Բնարեկամ ու ծանօթ չկար քովս, եւ կիսովին ետիս դարձած, դոլորչուտ պատուհանէն կը դիտէի ալեաց գիսախուի կատարներն որք կուգային անընդհատ զարնուիլ և խօլական դժեր ձեւացնել այդ ապակոյն վրայ, ի գուր իրենց մոլեղնութիւնը փորձելով այդ դիւրաբեկ ու միանգամայն գերազանցապէս հաստատուն մակերեւոյթին վրայ, — երբ գգացի որ մէկը եկաւ նստաւ քովս. ասդին դարձայ ընդոստ, ու, կէս մութին մէջ ճանչցայ զինքը. Միհրանն էր, դպրոցական վազմի ընկերներէս մին, զոր երկու երեք շաբաթ է ի վեր չէի տեսած։

— Դո՛ւն ես, Միհրան, ըսի զուարթութեամբ. բար՛իրիկուն։

— Աստծու բարին, պատասխանեց այծպիտի շեշտով որ շատ տրամադրութիւն ցոյց չէր տար խօսակցութիւնն ադկից աւելի շարունակելու։

— Ի՞նչպէս ես, աղէ՞կ ես։

— Շնորհակալ եմ, հանգիստ եմ։

— Շատոնց է չէս երեւցած։

— Ը՛հ։

Այո՛, աներեւ էր, անհանգիստ կ'ընէի զինքը։ Շրթանցը շարժուածքէն՝ որք հազիւ հազ կը բացուէին քանի մը բառեր թափթփելու համար, և ձայնին թոյլ ու քաղցրուկ շեշտէն կ'երեւէր յայտնապէս թէ այդ վայրկեանին նախամեծար պիտի համարէր ինքն իրեն մնալ, եւ սակայն շատ տարուան բարեկամներ էինք, գրեթէ մտերիմ։ Դպրոցական երկար չըջան մը իւրաքու կապած էր զմեզ յիշատակաց անքակտելի կապերով։ Դասարանին մէջ քովս կը նստէր, և որովհետեւ այնչափ աղէկ չէր դասերուն մէջ՝ ինձմէ կ'ընդօրինակէր իր շարագրութիւններն ու պարտականութիւնները։ Ընկերներս և ես, ամէնքս ալ կը սիրէինք զինքը, Գիրուկ ու կ'ըր գէմ-

քով խոշորեկ տղայ մըն էր, բարի, չափազանց բարի, այն տիպարներէ մին որոց կը պատշաճի ժողովրդական նկարագրեղ բացատրութիւնը, «Բերանը ա՛ղ դիր մորթէ՛», Դպրոցէն ելլելէ վերջն ալ դադարած չէր մեր բարեկամութիւնը։ Փաստաբանի մը գրասենեակն էր ի Ղալաթիա, բաւական աղէկ վիճակ մը ունէր։ Ուրիշ ատեններ, երբ շոգենաւին մէջ տեսնէր զիս, օձիքս թող չէր տար, և, զուարթ ու շատգրուց, մոռցնել կուտար շոգենաւին դանդաղ ընթացքն ու անխնկուն գրնդիւնն որք ջուրը կը ծեծեն յուսահատեցուցիչ միօրինակութեամբ։ Այն իրիկուն ուրեմն ինչո՞ւ հեռու կը փախչէր ինձմէ։

— Յոգնած կ'երեւաս կոր, Միհրան, ըսի։ Չէ՛ նէ մի հիւանդ ես։

— Չէ՛, բան մը չունիմ։

Համալարին լուսով զինքը դիտեցի ու շագրութեամբ։ Նոյն խաղաղ ու անմեղ դիմագծութիւնն էր միշտ։ Աչուքներուն մէջ սակայն խուզարկու անհանդարտութիւն մը կար, թարթիչներն անդուլ կ'ելլէին կ'իջնէին ջղաձգաբար։ Ձախ ձեռքին ափովը ճակատը կը չփէր շարունակ։

— Չէ՛ մի զուրցեր, դուն բան մը ունիս և ինձի չես ըսեր կոր։ Ինձմէ բա՞ն պահել սկսար։ Քեզի այսպէս տեսած չէի երբեք։ Ըսէ՛, վի՞շտ մը ունիս։

— Չէ՛, կրկնեց խուսափողական կերպիւ։

— Այդ չէ՛դ կը հասկցուի որ չեմ սխալեր։ Ներսիդին բան պահելը աղէկ չէ։ Ինձի չ'այտնես որի՞ պիտի յայտնես։ Ըսէ՛, կը մխիթարուին, սիրտդ կը թեթեւնայ։

Այս անգամ երեսոս նայեցաւ անսահման խանդաղատանքով ու ձեռքս բռնեց։ Հակառակ ցուրտին, իր ձեռքը կ'այրէր։

— Այո, աղէկ չեմ, ըսաւ։

Ու ա՛լ չկրցաւ զսպել ինքզինքը. երկար շունչ մը տուաւ. սիրտը պիտի սլոթկար կարծես։ Ու յուզմունքէն դողդոջուն ձայնով մը.

— Ուրիշներուն չէի զուրցեր, որովհետեւ վրաս պիտի խնդային, բայց քեզի կ'ըսեմ։ Մեր սենեակը եկած ես. փողոցին վրայ պատուհանին քով կը նստիմ միշտ, կամ թէ կը նստէի ասիկց առաջ։ Դիմացը կարդ մը տուններ կան, որոց տա-

կը խանութ է : Օտարագլխի ընտանիքներ կը բնակին այդ տուները , չես գիտեր աշխարհքիս ո՛ր կողմերէն եկած ինկած այդ տեղուանքը : Ղալաթիոյ մէջ խանութ ունեցող մարդոց ընտանիքներ են ասոնք , որք տեղւոյ մօտութեան պատճառաւ յանձն առած են այդ խղճուկ շէնքերուն մէջ գալ մաշեցնել իրենց կեանքը : Երբեմն երբեմն պատուհաններուն վանդակներուն բացուածքէն կիներ ու աղջիկներ տեսած էի , բայց կարեւորութիւն չէի տեսած : Կը ճանչնաս ինծի :

«Ասկից եօթը ութը ամիս առաջ , սպորիլին էր կարծեմ , օր մը դուքսը նայած ոտենս , տեսայ որ ճիշդ դիմացի պատուհանին առջեւ պզտիկ աղջիկ մը նստած կար կը կարէր , գլուխը կախած : Ալ աւելի ուշադրութիւն չդարձուցի : Հետեւեալ օրը նորէն իր տեղն էր , ու կ'աշխատէր շարունակ առանց գլուխը վեր վերցնելու : Հետեւեալ շաբթուն , հետեւեալ ամսուն , ամէն օր անխախտ իր տեղն էր :

«Քիչ քիչ նայուածքս վարժուեցաւ իրեն . առտուն եկածիս պէս , առաջին անգամ աչքս հոն կ'երթար մէյ մը : Ինքն ալ իմ ներկայութիւնս նշմարած էր :

«Կամայ կամայ համակրութիւն սկսայ ունենալ այդ աշխատատէր պզտիկ աղջկան համար , որ ասեղը ձեռքէն չէր թողուր : Ուշադրութեամբ գինքն սկսայ դիտել : Տասնըհինգ տարեկան կար չկար , սիրուն , անուշ դէմքով . երեսը գոյն չը կար , ճիշդ իմ սիրածիս պէս , քիչ մը նիհարկեկ , խոշոր կապոյտ աչուքներով . մազերը դեղին էին , բայց աչքի զարնող դեղին մը , ոսկրի գոյն . առջևի կողմէն այնպէս կը շտկէր զանոնք որ ամբողջ դէմքը կը շրջանակուէր պզտիկ խոպոպիքներով . Աստուածածնի պզտիկ դէմք մը , որ համբոյրի մը մէջ պիտի սեղմէր : Հիւանդի այնպիսի դէմք մը ունէր , որ առաջին անգամէն սրտին դաւաճ . գլուխը ծած առնէ , ճակարին ուռեցած կապոյտ երակները կ'երեւնային սուր աչուքներուս :

«Հետզհետէ համարձակութիւնս եւելցաւ . եկածիս պէս իրեն կը նայէի , ինքն ալ ինծի կը նայէր մէյ մը : Պատուհանը գիտմամբ աղմուկով կը բանայի առտունները , որ եկած ըլլալս հասկնար : Օր մը բարեկեցի գինքը գլխովս . անուշութեամբ ըն-

դունեց բարեւ : Աւելի առաջ չուղեցի երթալ : Առտուն կուգայի գինքը կը բարեւէի , ե , մինչեւ իրիկուն , ինք իր պատուհանին առջեւ , ես իմ պատուհանիս առջեւ , իրարու կը ժպտէինք , երբ ինք կարելէն կը յոգնէր , ես ալ գրելէն : Քրոջ ու աղբօր պէս բան մըն էինք եղեր : Նորէն կ'ըսեմ քեզի , պատուհանէ պատուհան գուհիկ սիրահարութիւն մը չ'էր , ինչպէս կը պատահի . չէ' , պարզ բան մը , որ կը բաւէր իմ հանգարտ սրտիս : Այդ դէմքին այնպէս վարժուած էի հետզհետէ որ եթէ գինքը օր մը չը տեսնէի , այնպէս պիտի տխրէի երբ իրիկունը տուն երթալով մօրս կամ քրոջս դէմքը չ'տեսնէի :

«Իր վիճակէն գոհ կ'երեւնար . երբեմն երբեմն քթին տակէն երգ մը կը մուտար , որուն հետաւոր շէտերը մինչեւ ականջս կը հասնէին : Յետոյ ասեղը ցոյց կուտար յուսահատութեամբ . այո , կ'զգայի , իր ասեղին մէն մի հարուածը մէկ մէկ կաթիլ կը պակսեցնէր իր արդէն պակաս արիւնէն : Դեղին էր , ա՛խ , շատ դեղին :

«Օր մը , միտքէս չ'ելլար , ամառուան հրաշալի օդ մը կար , ինքզինքնս ելած , համբոյր մը զրկեցի իրեն ձեռքովս . մատովը սպառնացաւ ինծի , ու համբոյրս չընդունեց : Առաջին ու վերջին յանդգնութիւնս եղաւ այս : Ինքն ալ չէր ուզեր մեր մտերմութեան հանգամանքը փոխել , ե . ես եղածովը շատացայ : Ո՛չ իր անունը գիտէի , ո՛չ ինչ ազգէ ըլլալը : Եթէ ուզէի կրնայի իրիկուն մը սպասել իրենց դրանը առջեւ , իրեն ո՛վ ըլլալը հասկնալ , մեր բարեկամութիւնն աւելցնել . չէ' , չէ' ուզեր . այդչափ երջանկութիւնը կը բաւէր ինծի :

«Երկու շաբաթ առաջ , տոտու մը դարձեալ եկած ատենս դիմացը նայեցայ ե գինքը չգտայ : Օգերը աւրուելէն ի վեր , գոյ պատուհանին ետեւ կ'աշխատէր : Սիրտս ճմլուեցաւ . այն օրը ամբողջ , աչքս մէյ մը թուղթիս վրայ էր , մէյ մը դիմացը . հետեւեալ օրն ալ հոն չէր , յաջորդ օրն , ամբողջ շաբաթ : Ինչ ընելու չէի գիտեր . կեանքիս մէջ պարապ մը կ'զգայի զոր ոչ մէկ բանով չէի կրնար կոր լեցնել : Ինքնիրենս կ'ըսէի թէ հիւանդ ըլլալու էր մէկ քանի օրուան համար . ե . ասով կը մխիթարէի ինքզինքս :

«Այս չորեքշաբթի, երեք օր է անկից ի վեր, նորէն պատուհանին մօտ նստած էի, մէկ աչքս դուրսը: Սքանչելի օդ մը կ'ընէր առջի օրուան անձրեւներէն ետքը. ամառուընէ օր մըն էր մնացեր: Յանկարծ փողոցէն եկեղեցական երգերու չիօթ աղմուկ մը լսեցի. բնագդաբար, պատուհանը բացի եւ գլուխս դուրս ծռեցի...»

Բարեկամս կանգ առաւ յանկարծ: Շրթանքը վրայ ժպիտ մը ունէր հիմակ, տարտամ, անստույգ, անբարատրելի ծալք մը, որ բանով մը չկրնար սահմանուիլ, խնդութեան արտայայտութիւն ու լալու պատրաստականութիւն է միանգամայն: Ալ երեսո չէր նայեր, աչուրները կարծես հիմակ կը հետեւէին հեռաւոր տեղիւքի մը: Ու երազի մը մէջ, խօսելու պէս չարունակեց.

— Այո՛, ինքն էր, գիմացի աղջիկը, հոն պառկած, դադաղին մէջ: Յոյն քահանայներ կը հետեւէին դադաղին, ու ան տոնէն առաջին անգամն ըլլալով հասկցայ թէ յոյն էր ինքն ալ: Ճերմակ մուկինէ չըզգեատ մը հագցուցած էին իրեն, ձերմակ տանթէլներու մէջ տունուած էր դուրսը, բայց իր դէմքը անոնցմէ ալ աւելի ձերմակ էր: Մեռած մի, այդ աղջիկը. չէ՛, հաւատալս չէր գար: Ինծի այնպէս կ'երեւար որ իրեն կէս բաց աչուրները, որոնք դէպի վեր ուղղուած էին, ինծի կը նայէին տակաւին իրենց խեղդեցնող անուշութեամբը, եւ իրեն կուսական բարակ կուրծքին վրայ խաչածեւ դրուած ձեռքերուն մէջ ասեղ մը կար կարծես, ու մատները պիտի շարժէին զայն հիմակ, անմիջապէս: Արեւն ալ տանթէլներուն մէջէն տեղ տեղ ըստուերներ թափելով իր դէմքին վրայ, կենդանութեան հով մը կուտար իրեն: Մեռած մի, չէ՛, կարելի չէր: Իրեն շըրթունքներն ալ, որոց բացուածքէն կ'երեւար ակոյններուն շարքը, համբոյր մը չէին զրկեր ինծի:

«Հոն կեցած էի քար կտրած, մարմինս աւելի պաղ պատուհանին երկաթներէն որոնց կրթնցուցած էի գլուխըս: Քահանայներուն ու տիրացուներուն խաղտ շարականները չէի լսեր ու դադաղին ետեւէն եկող մարդիկը չէի տեսնար բնաւ: Աչուրներս չէի կրնար կոր բաժնել անոր դէմքէն: Վայրկեան մը չը տեւեց այս, բայց սա գիտեմ որ տաղ տարուան դէպքեր չը պիտի կրնային այնքան ազդել ուղեղիս վրայ որչափ այդ րոպէական թափորը: Ինքիրմէս ելած էի: Դադաղը կամաց կամաց յառաջանալով

անյայտ եղաւ փողոցին ծայրէն, ու ինծի այնպէս կուգար թէ սրտէս պատառ մը կը տանէին այդ սեւ մարդիկը:

«Չեմ գիտեր ո՛րչափ ատեն հոն մնացի այդպէս. գլուխս չէի կրնար կոր բաժնել այդ երկաթներէն. այն փողոցին անկիւնին մէջ բան մը պատահած էր, տխուր ու սոսկալի բան մը, խառնափնդոր երազի մը տպաւորութեանը պէս, որ բոլոր մտածումներս կը տարտուներ:

«Դուռը բացուեցաւ յանկարծ և ինքզինքս թոթուելով ետիս դարձայ. յաճախորդ մը եկած էր կարեւոր անդեկութիւն մը հարցնելու. մէկ քանի խօսքով ձամբեցի զինքը. մարդը զարմացմամբ երեսո նայեցաւ ու ձայն չհանած դուրս ելաւ:

«Փրասեղանիս առջեւ անցայ մեքենաբար. ստիպողական նամակ մը կար գրելիք. ութ անգամ սկսայ գրել, ութ անգամ ալ պատուեցի. դադաղներս չկըրցայ բնաւ ամբոյսիւ: Յուսահատութեամբ մէկգլի նետեցի գրիչը, սենեակին դուռը գոցեցի և կանուխկեկ տուն դարձայ. տունը ըսի որ գլուխս կը ցաւէր քիչ մը և պատառ մը բան ուտելուս պէս անկողին մտայ:

«Հետեւեալ օրը նամակ մը գրեցի սենեակը և գործի չ'ինջայ:

«Այսօր գացի սենեակը: Ներս մտնելուս պէս նայուածքս գիմացի պատուհանին կողմը դնաց. ճիշդ նոյն տեղը ուրիշ աղջիկ մը եկեր նստեր էր, ու ան ալ կը կարէր գլուխը կախած. բայց կապկի ձաղի պէս բան մը, սեփ սեւ, թափթիփած հագուստներով. գլուխս տաքին առի, և անմիջապէս գրասեղանս սենեակիս միւս անկիւնը տարի ուսկից գիմացը պատուհանը չ'երեւնար: Մինչև իրիկուն անգամ մը փողոց չը նայեցայ, սակէ ետքն ալ չի պիտի նայիմ: Ի՞նչ ընեմ, սիրտս կտոր կտոր կ'ըլլայ կոր քանի միտքս կը բերեմ մեռնողին դէմքը:»

Շոգենաւը մօտեցած էր և քայլափոխներու գլորդը կ'զգայինք մեր գլխուն վերեւ խուլ շշուկով:

— Կը ներես, ըսաւ, եղբայրս վերը ինծի կ'սպասէ, երթամ գտնամ զինքը:

Ձեռքս սեղմեց տենդային սարսուռով, և ընդհուպ տեսայ իր լայն ուսերուն կորուսելը աճապարող բաղմութեան մէջ:

Լ. ԲԱՇԱԼԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ

Երկու լուր. — Մէկ մէճիտին ոչառութիւնը. — Առաքել վարպետն և գերեզմանը. — Գաւթի զամբանականը:

Օր մը Կալաթայի մէկ ճաշարանէն դուրս կ'ելնէինք. Լեւոն կերակուրները կը գտատէր, Օննիկ գինին լաւ չէր գտած, ե'ս ինչ ըսի՝ չգիտեմ: Ծիչդ նոյն պահուն՝ ծայն մը՝ ե'ս օր հոգի քաւ ել լաւէ՛ք՝ մեր դատաստանը կտրեց նետեց սուր անելիի պէս, և լուի սնցանք գացինք: Գաւառացի հայ մըն էր, և խոշոր մարդ մը՝ որ իր ընկերին կը խօսէր: Այսպէս ահա այդ մարդոց կեանքը փողոցի քարերուն վրայ դրուած է. բաւական է քիչ մը ականջներդ արել և նայուածքդ խոնարհեցնել աղտոտ և քճքճեալ լաթերու վրայ: Արհեստանոցի ճամբան շատ բան սովորեցուց ինձ, և կ'ուսանիմ ամեն օր:

Ուզած էի գիտել նաև թէ ի՛նչ կ'ընեն մեր Պանդուխտք այլեայլ քաղաքացի մէջ. ուստի հաւատարիմ թղթակիցներ ճարեցի, և ընդունած եմ նամակներ, ծրարներ, որոց ամենքն ալ մեռելութիւն, հիւանդութիւն կը հտտին: Մեր Տիգրանը կը դրէ թէ առաւօտ մը Ատանայի եկեղեցւոյ բակը գտած է Մշեցի մը, հիւանդ, քսակը դառնարկ և անտէր. սեւուկ յօնքերու տակ մարմնած աչքեր, թառամ ճակտի վրայ վշտի դառնագոյն հետքեր, ցաւեր կողերուն ու կշտին վրայ, և իր տաք շնչոյն մէջ կարօտի շողին: Ապրի՛ Ատանայի Ս. Առաջնորդն՝ որ այդ հէք տղան հոգացեր ու տուն զրկել է, ինչպէս հոգացեր է և շատեր:

Աղքատագրիոյ թղթակիցս աւելի անգուլթ գտնուեցաւ. քսանեութ տարեկան Բալուցի երիտասարդ մը վաղամեռիկ նետեր է գերեզմանին փոսը՝ երկու օր գաղղիական հիւանդանոցը տառապեցնելէն ետքը: Կը ճանչլի զնա, մոնկութեանս մէկ խաղակիցն եղած էր. աղուոր տղայ մը, արեւու և ցրտին դէմ անպատասլար աշխատող, որ սակայն կանացի գեղեցկութիւն կը պահէր և ցածուն պարկեշտութիւն մը, իբրեւ ծիրանի շղարշ, իր այտերուն վրայ: Այս շնորհաց հետ կը

կցորդէր Նիկողոս կորովի կաղմ: Աղքատանդրիոյ մէկ գիշերը բաւական եղած էր քայքայել այդ երիտասարդ չնքը: Բան մը որ աւելի սրտաճմլիկ կը խօսի սրտի, սա է որ՝ պանդուխտի մեռնելէն ետքը՝ իր թողած քանի մը դահեկանը կ'առնուի իր գրպանէն և սեւ թղթի մը հետ իր տունն ու տղայոցը կը զրկուի: Նիկողոսի քսակէն ելած էր վեց ոսկի, զոր, շնորհիւ եգիպտոսի Ս. Առաջնորդ Հօր, կարող եղանք հասցնել անոր մանկամարդ այրւոյն. վերջին նպաստն էր այդ չմոռնամ ըսել՝ մէ՛ք ճշ պահաւ:

Անշուշտ պէտք է հարցնես, Արիիար, թէ սուր դնաց այդ մէճիտը: Կ'արժէ լսել պատմութիւնը: Գեր. Իզմիրլեան, Նիկողոսի մահէն անմիջապէս ետքը, գրով մը անոր կորուստն ու գրպանէն ելած գումարին հաշիւը կը ծանուցանէ Բալուայ Առաջնորդ Հօր: Շատ չ'անցած, պաշտօնական թուղթ մը և ընկալագիր զրկուեցաւ հոս՝ այրի կնոջը Խաչիկ Կոստոյանի գործած և վաւերացեալ մեր գիւղի թաղ. Խորհուրդէն և Ս. Առաջնորդ Հօր կողմանէ: Հարկ էր որ վաւերացնել տալինք մեր Պատրիարքարանի, ուստի հոն գիւմեցի երեկոյ մը: Մարդուն մէկը օրէնք մը ցոյց տուաւ, որով՝ առնուազն պէտք էր 50 դահեկան վճարել: Աղաչեցի իրեն, հետս էր Շաքարեան, նա ալ աղբւսեց սրտագին. բայց անօգուտ. ինքն իր օրէնքը ցոյց կուտար, և մենք անօրինակ ցաւ մը. ըսինք իրեն թէ շատ լաւ կ'ըսես, օրէնքը յարգելի է, գիւանական ծախքեր կան. բայց մեք հոս առեւտրոյ թղթեր վաւերացնելու եկած չենք. այդ գումարը, երիտասարդ պանդուխտի մը գրպանէն ելած, վերջին նպաստն էր իր տանն ու տղայոց, ա'լ այսուհետեւ ասոր ետին չկայ, չկայ, յաւիտեան չկայ: Փոխանորդ Հօրն օգնութեանը պէտք ունեցանք. ապրի, մէկ մէճիտի կապեց. տուինք և վար իջանք: Զայրոյթս անհնարին էր, առաջ զրան վրայ վերջին քայլս չփոխած՝ ուխտ ըրի Մայր եկեղեցւոյ առջեւ որ այս բանը գրեմ ճշգրտութեամբ և խնդրեմ որ այս տեսակ թուղթեր օրէնքէ դուրս նկատուին, և ահա այս ուխտն է զոր կը կատարեմ. բան մը, բառ մը սխալ չկայ. վկայ է Պ. Շաքարեան:

Զատիվեր մը կ'ենէնէինք. մեզմ ճայն մը ականջիս զարկաւ ետեւէս. դարձայ. — Իսկ քիչ, — ասի բան չէ կերպ չէ: Մեր պանդուխտներէ մին էր. նօթութեան կարմրութիւնն ունէր կծկեալ և կոնծած դէմքին վրայ: Ճանչցած էր զիս, ճանչցայ և ես զինքն իր մաշած լաթերուն, հինցած տարիքին և ճնշուած մարմնոյն մէջ. — Առաքել վարպետն էր, քսան և հինգ տարի հոս անցուցած և աշխատած իբրեւ որմնադիր. համեստիկ ալ մարդ, որ իր տարիքին այդ վայրէջին մէջ Իսկ քիչ կարօտ էր մնացած: Պէտք է հաւատալ որ այս մարդիկ մուրացկանութիւնն ալ չ'գիտեն: Անկէ ի վեր բաւական ժամանակ անցած էր. երէկ լուր առի որ այդ հինցած և աղքատիկ մարդը հայրենիք զրկել են իր գիւղացիք փոքրիկ գումար մը հանգանակելով: Եւ հիմա այդ ծերունին իր ծնած հողին վրայ կ'ապրի, և պիտի մնայ հոն. ա'լ պանդխտելու վախ չունի: Մեր գաւառացւոյն համար Տրապիզոնի, Սամսոնի և Կիրասոնի ճամբան այն ատեն միայն փակուած է երբ այսպէս օր մը, նօթի և ծերացած, քիչ քիչ իր տունը կը դրկուի, և երբ այլ ևս գործելու բոլորովին անկարող է: Տուներու պահապանք ալ այդպիսիք են, եթէ կարելի է ըսել որ տարիքով և ուժով ըսպառած այդ մարդիկ՝ բա՛ն մը կ'արժեն աշխարհի վրայ: Չեմ յիշեր թէ ո՛ր կարգացած եմ որ կղզւոյ մը ծերերը, տեսնելով որ երկրին անպէտ ծանրութիւն մը ըլլալէ դատ ուրիշ բան չեն, անձնասպան կ'ըլլային կամաւ. և մեր տանց պահապան կը մնան այդպիսիք: Պանդուխտի համար սակայն այդ ալ մեծ բարեբախտութիւն է. եթէ ոչ մեր տուները, պապենական գերեզմանները չ'են կը պահեն գոնէ. առողջ ալ գոհ կ'ըլլայինք և ո՛րչափ մխիթարուած եթէ Պալլադի բոլոր ցաւած և ցաւկոտ ոգիք մեր Առաքել վարպետի բախտն ունենային: Այդ սիրտիանքն իրենց ընտանիքներն ալ չէին ունենար. ամեն շաբաթ գիշեր, երբ բարեպաշտիկ մայր մը, ըստ սովորութեան խունկ ու աղօթք կը տանի մեր գերեզմանոցը, չինտուր հոն իր տղուն քարը կամ հողագունդն. արցունքն ու հառաչանքը չ'են խնդրեր հոն սիրեւորոյն ստուերներ: Ասոնք մեզ

համար՝ գուցէ բանաստեղծութիւն ըլլան. բայց մեր գաւառացի պառաւին, ծերունիին և հարսին՝ հաւատոյ էական մասունքը, գերեզմանոցը՝ սիրելիներու տունն է, մօր մը ծխած խունկն ու սփռած արցունքոտ հառաչանքը՝ բոցեղէն թեւեր են որ մեռելոց և կենդանեաց ոգիներն իրարու կը կապեն: Իրաւ կ'ըսեմ, ամեն շաբաթ գիշեր, մեռելոց օրեր, մանաւանդ Զատիկ երկուշաբթին՝ հոգեկան աշխարհ մը թունդ կ'ենէն գառնակսկիծ յիշատակներու և խեղդուկ հեծկլտանաց ներքեւ: Չեմ գիտեր, մեռելներն ալ բան մը չ'են ուզեր. Պալլադի հողը ցնցում չը կրեր:

Պալլադի հող: ... շաբաթ չանցնիր, օր չմարիր շատ անգամ, ուր հողին մէջ փոս մը չբացուի և երիտասարդ մը չընեն հոն. «Պանդխտութեան մէջ հիւանդանալն ու մեռնելը գաղտնի կը լինի», անոնք ո'չ թերթ ունին և ո'չ յայտարարութիւն: Իմացա՞ր մեր Գարեգինի մահը: Այս ամսոյ մէջ ուրբաթ օր մըն էր, ըստ մեր Շաբարեանի՝ արցունքի և մահու նախասահմանեալ օր. Կէտիկ փաշայի եկեղեցին լցուած էին վասպուրականցի երիտասարդներ. Գարեգին սեւ ծածկոյթին տակ կ'երկարէր. քսանեհինգ տարեկան հասակ և եռանդուն տիոց յոյսեր կը սառէին հոն: Ներս մտաւ յանկարծ Պանդուխտներու Մեծը, Բողոքականի հեղձուցիկ ոգին ճնշումն ու վշտի ծանրութիւն՝ թերեւս ոչ մէկ անգամ այնչափ զգալի եղած էր ծերացեալ Հայրիկի վրայ. պաղ քրտինքն ալ կ'ողողէր իր դէմքն: Եկած էր Գարեգինի ողջերէն ըսելու: Ո՛չ փիլոն ուզեց, ո'չ վեղար. գաւազանն ալ չ'ողջաց իր ձեռքին մէջ: Իր խկական ձեռովը դարձաւ մեզ: Ես միտքս դրել էի չկաշկանդել ինքզինքս. ուստի աղաչեցի զՇաբարեան որ դամբանականին համառօտութիւնն ինքն ընէ որչափ կարելի է, և ահա նոյնը կը դնեմ հոս. «Մէկ ժամ առաջ լսեցի անբախտ Գարեգինի մահը. ահ, պանդխտութեան մէջ հիւանդութիւն ու մեռնել գաղտնի կը լինի: Դեռ չորս օր էր որ Գարեգին հիւանդ էր ինկած. խոկ այժմ իր ցուրտ մարմինը կը տեսնեմ ահա. իր հայր քսան տարի մաշուելով հողիւ ճողպրեցաւ պանդխտութեան ճանկերէն և հոս թողուց իր երկու նորատի գաւկներ:

Գարեգինի տէր իր մերձաւոր ազգականներէ մին եղաւ . տասնեւհինգ տարի աշխատեցաւ և օր մըն ալ զայրոյթ ցոյց չը տուաւ . զարմանալի համբերող ոգի ունէր : Զ՝ յաջողեցաւ իրեն հայրենիք երթալ . տակաւին քանի մը շաբաթ առաջ նամակ ստացայ իր ծերունի հօրէն որ կ'աղաչէր թէ ինչո՞ւ նամակ կ'ուշացնեն , չ'ըլլայ թէ բան մը պատահած է : Եւ ահա պատահեցաւ : Կ'աղաչէր որ իր զաւկներէն մին գէթ հայրենիք զրկենք և իր ծերութիւնն անմխիթար չ'թողունք : Ա՛հ , ո՞վ պատասխան պիտի տայ . ո՞վ կը լինի անոր գուժկան : Ես կը գրեմ թէ ահա վաճանք քե՛զ զրկեցի , իսկ Գարեգինը երկի՛նք : Բայց ո՛չ , ես գուժկան չեմ կորուզ լինել . ես կը խնդրեմ որ հօրեղբայրն զՎահան զրկէ . թող նա յանկարծ երթայ տուն մտնէ , և երբ հայրն հարցնէ թէ ո՞ւր է Գարեգին , Վահան թող ըսէ . Ե՛ս եկայ , հայր , Գարեգինը մի՛ հարցնէր : Աղօթենք որ Աստուած յաջողութիւն տայ և մեր տունները դառնանք . թող անօթի մեռնինք , աղքատ մեռնինք , բայց մեր սիրելեաց գրկին մէջ մեռնինք :»

Եւ Հայրիկ կուլար :

ՀՐԱՆԴ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԸ

ՅԻՇՍԱԿՆԵՐՈՒՄ ՄԵՋ

Օրթագիւղի վարժարանը . — Թարգմանիչներ . — Սեթեան . — Պերպերեան Աւետիս պատուելի . — Իմ գաղտնիներս . — Գաբրիէլ Ներշապուհ :

Այս վարժարանը կը կազար , իր հին ու երերուն շէնքովը , դրամական կացութեամբն եւ ընդհանուր կառավարչին ձախ ուղծովը :

Հէք մարդուն այս ձախորդութիւնը պատերազմի մէջ ստացուած չ'էր , թէեւ այն անվերջանալի կռուոյն մէջ , զոր քառորդ դարէ ի վեր կը մղէր ազգին անզուսպ ու անուղղայ տղոց դէմ , յաղթեալը միշտ ինքն ըլլար : Սնտաի պարծենկոտութեամբ չէր ուզեր իր պարտութիւնը ծածկել . գիտէր որ անկարող էր յա-

ջողութեամբ մաքաւելու իր հսկողութեան յանձնուած մանուկներուն դէմ և բացէ ի բաց կը խոտոտվանէր զայն , հեազհետէ զինադադար և հաշտութիւն առաջարկելով :

Իր պայմանները՝ ամեն յաղթեալ մարդու պայմաններու պէս մեղմ ու չափաւոր էին :

Ընդարձակ սրահին երկու եզերքին երկայնութեամբ շարուած դրասեղաններուն մէջ պաշարուած , կեդրոնացած , անհաւատար կարկինի մը պէս դառնալով իր ուղիղ ոտքին վրայ , այս յաւիտենական զինուորն իրաւաստութիւն կ'առաջարկէր ողորմ՝ ձայնով մը որ ամենուս սիրտը կը շարժէր :

— Սառէ՛ սուս . . .

Սառէ՞ սուս . կ'ընդունինք քառորդ ժամուան մը համար լուռ կենալու պայմանաւ ամեն ինչ ընելու այս արածնութիւնը . բայց քիչ քիչ մեր անհանգիստ շարժումներն այդ դաշինքը կը խզեն . առանց շարժման կեանք չ'ըլլար ու առանց աղմուկի շարժում չ'ըլլար վարժարանի մէջ , և մենք այս Փիղիքական օրէնքներուն ենթարկուած , մեր անկենդան ջըլլալը հաստատելու ոտիպեալ , համբերութիւննիս սպասած ու մոռնալով ամեն ուխտ և դաշինք , ձայներնիս կը հանէինք անտանելի ժխտով մը լեցնելու համար թարգմանչաց վարժարանը :

Դպրոցին քով Բարեսիրաց թատրոնը կ'ստատէր հանդարտ ու կեղծաւոր երեւոյթով ու այս մերձաւորութենէն դժբաղդեալ ամեն ոք թատրերգութիւն կը պատրաստէր հոս . Հայր Արտէն՝ Ռասինի սղերերգութիւնը կը թարգմանէր , Թերզեան՝ Հայր Արտէնի իփիգենիան , Թղլեան՝ Թերզեանի Սանդուխտը , ու մենք ամենքս Միշէլ Լեվիի հռչակաւոր Théâtres Contemporainsի հաւաքածոյները , Ճշմարիտ թարգմանչաց վարժարան :

Թատրոն ու թարգմանիչ զիրար գտած էին :

Այս վարժարանի մէջ ճանչցայ սեւ ու մութ երիտասարդ մը , Յովհաննէս Սեթեան , որ վերջէն բանաստեղծ մը պիտի ըլլար , բոլորովին անսկսկալ բանաստեղծ մը , որ այս ընդհանուր արշաւին մէջ

իր երկրորդական դասատուի դիրքը սահելու պարտաւոր, հաստ ու ծանրաշարժ հատորներով բեռնաւորուած, որոց բաւարաններ ըլլալը գիտէինք, կը վազէր ծակէ ծակ մտնել, մեզմէ գաղտնի, բոլորովին գաղտնի, բառ դոց ընելու համար մինչեւ վերջը, և իր նպատակը ծածուկ սահելու ջանքին մէջ չփոխած, չկարենալով պարտկել բէշին տակ ահագին ու մեծաւ գիրքերը, հապճեպ ու փութաջան՝ կ'անցնէր մեր տաղեւէն, ու մենք այս խոյս տուող դասատուին սեւ զգեստներուն, նիհար սրունքներուն ու գորշ դոյնին նայելով ետեւէն, երկու օտքերուն վրայ կանգնած վիթխարի ու փախտական մուկի մը կը նմանցնէինք զինքը:

Այն ատեն կրօնագիտութեան դասը կը սիրէինք. թալուկ ու դողդոջուն ծերունի մը, գիտուն ու հոյակապ մարդ մը կ'աւանդէր մեր կրօնքի դասերը:

Իր նիհար ու ծառի կեղեւի մը նման ճարձկած դէմքը՝ դեղին ու ճերմակ էր գրեթէ երակաց անարիւնութենէն, ու քիթը խոշոր, յամառ ու հաստատամիտ մարդու քիթ մը, մշտնջենական հարբուխի մը դատապարտուած ըլլալու էր զոր մեծածաւ կարմիր թաշկինակով մինչեւ վերջը կը սրբէր:

Այս ալեւոր կրօնագէտը, Պէրպէրեան Աւետիս Պատուելին կը սիրէինք. կը սիրէինք իր տարիքին հակառակ անհոգ եւ աւանդին ու իր ճշմարիտ կրօնասիրութեանը համար, որ ամեն բանէ առաջ ազգասիրութեան վրայ կը յենուր միշտ:

Կենդանի, աշխոյժ ու պատերազմիկ դասախօսութիւն մըն էր, ուր մեր կրօնքին նրբութիւններէն առաջ, հսովմէականաց ու բողոքականաց դէմ յաջողութեամբ վիճաբանելու եղանակները կ'ուսանէինք:

Ու ամեն անգամ սովորած դասերնուս, մեր վարժապետին գիտութեանը կըրթնած, վիճարանելու անհամբեր, փողոցէ փողոց, լեռնէ լեռ կը շրջէինք բողոքական մը գտնելու ու Տիրոջ խօսքին մեր դաւանութեանը համաձայն ըլլալը հաստատելու համար. ոչ մէկ ճշմարիտ բողոքական կ'ելլէր մեր դէմ. ի գուր աջ ու ձախ հանդիպած բոլոր կեղծաւոր բարեպաշտները, սիրելիս, բարեկամ բառե-

րով սխաղ շրջուն գրավաճառները վար կը գնէինք ճամբուն վրայ՝ բռնի Աստուածաշունչ գնելու պատրուակաւ, կեցնելով զինքն, ու սրբոց բարեխօսութեան վրայ իր կարծիքը հարցնելով, մեր պատրաստ ապացոյցներն ու փաստերը գլխուն նետելու և զինքն ամօթահար ընելու համար: — Սովորաբար կա'մ անանկացած վաճառական մը կ'ըլլար կա'մ անգործ դասատու մը որ յօժարութեամբ կ'ընդունէր մեր տեսութիւնըն ու մեր սիրեցեալ եկեղեցւոյն ուղղութիւնը, զոր չքաւորութեանն համար միայն մոռցած էր:

Այսպէս լուրջ հակառակորդ մը պակասեցաւ մեզի ամեն ատեն, ու այն բազմաթիւ վկայութիւններն որով մեր բոլոր արարողութիւնները, ծէսերը, կը հաստատէինք, հետզհետէ մոռցանք: Բայց չեմ մոռնար երբեք իմ ծերունի դասատուիս պատկառելի դէմքը. իր մահունքէն դեռ չաբաթ մը առաջ եկաւ ժամանակին, ճշգրտապէս իր դասախօսութեանը մէջ, սովորականէն քիչ մը աւելի ակար, պարզելով ահագին կարմիր թաշկինակն ու վերջին օժման մասին մեր եկեղեցւոյ բզկըղբունքները. զինքն անբաժան կը տեսնեմ միշտ այդ թաշկինակէն. վառ ու հաւատարիմ գոյնովը իր դրօշակն էր գրեթէ ու կրնանք ըսել որ այդ դրօշակին մէջ փաթթուած մեռաւ Աւետիս Պէրպէրեան:

Թարգմանչաց վարժարանի դասընկերներս ծանօթ անձեր են բոլոր. Տիգրան Արփիարեան հրապարակագիր մըն է. Շըտանեան, Բապուճեան, ուսուցիչ են, Ատրունի իր դպրոցին հաւատարիմ թարգմանիչ մըն է միշտ, բայց ոչ աւելի գրոց. Սալովմիթ փաստաբան մ'է:

Սալովմիթ փաստաբան:

Ի՞նչու Սալովմիթ կը կոչէինք զինքը. ի՞նչ ըրած էր այս անունին արժանանալու համար. չտո կը սիրէ՞ր արդեօք Ռասինի Գրքաւան. չեմ գիտեր. անտարբեր, լուրջ, սլարդ, ուսեալ երիտասարդ մը որուն երկար և ուղիղ մասները բոլորն ալ բացուած տարօրինակ հողմահարի մը պէս խօսակցութեան ջերմութեանը մէջ հետզհետէ դիմացինին աչքը կը մոնէին. ի գուր

ետ կեցնել ուզած էինք զինքն այս վատ սովորութենէն. վերջապէս որոշեցինք գրականերուն մէջ պահել այդ անդուստլութեւերը:

Սալովմիթ իր դասը կ'արտասանէր ուղիղ և անշարժ կանգնած ուսուցչին դէմը, ոտքը ոտքին քով, թեւերը թաղուած անյատակ դրականերու մէջ, անհանգիստ, քրտնելով, տառնապետին դէմ կանգնած կարգապահ զինուորի մը ձեւով, ու քիչ մը ետքը դասին ոգեւորութեան մէջ մոռնալով բոլորովին իր կողիկ ու քաղաքավար կեցուածքը, քայլ մը կ'առնէր յառաջ ու ձեռքերն արձակած ակամայ յանդիմանութեամբ մը կ'երկնցնէր դասատուին երեսն ի վեր:

Սալովմիթ գեղեցիկ սեւը կը սիրէր. տարիներով դարձաւ, չըջեցաւ հատնելով մաշելով գեղեցիկ ուսերու ու սպիտակ մարմիններու շուրջը, իգական ընկերութիւններու, կանացի ժողովներու ծառայելով, հոտուըտալով փոքրիկ կոշիկներ, հեշտաբոյր ձեռնոցներ ու գեղեցիկ հովանոցներ. բայց անհամաձայնութիւն մը կար իր անձնուէր ու համոզելու հետամուտ ոգւոյն ու անհանգարտ ձեռքերուն մէջ, և այս ապարդիւն սպառումներով՝ որ իր նախապաշարունակները փարատեց, այս ամուլ մնացող համոզման ջանքերով, Սալովմիթէն փաստաբան մը միայն մնաց:

Նշեալադատ Ատենին առջեւ, խոփոռագէմ դատաւորներուն հանդէպ կեցած, մարդ մը՝ անչափահասի մը առեւանգութեան առթիւ կը պատասխանէ նախագահին, կը խօսի անշարժ ու անտարբեր, կրաւորական ու անզգայ գործիքի դիրքով, անսեթեւեթ տրամաբանութեամբ:

Իր մեղմ ձայնը լսողները, իր ամիսի կեցուածքը դիտողները ամբաստանեալը կը կարծեն զինքը. ես, հեռուէն, ճարտար յանցաւոր մը կ'ենթադրեմ իր տուած պատասխաններէն. հետաքրքրութիւնս կը շարժի:

— Աղջիկը չափահաս էր ու իր կամքով եկաւ, կ'ըսէր մարդը նախագահին:

— Տեսնեմ սա առեւանգիչին դէմքը, կ'ըսէի մոռքովս:

Վայրկեան մը մարդը ընդհանուր դատախազին ընդմիջումէն զայրացաւ, թե-

ւերը զոր մինչեւ այն ատեն թոյլ կերպով քովերէն թողած էր, երկու թիերու պէս վեր բարձրացուց իր բողոքը շնչելու համար, և իր այդ բացուած ու սպառնացող մատներէն անմիջապէս Սալովմիթը ճանչցայ:

Սալովմիթ առեւանգիչ. ի՛նչ պիտի ըսէր արդեօք Դպրոցատէր տիկնանց ընկերութիւնը: Բարեբաղդաբար իմ ապշութիւնս երկար չի տեսց:

Սալովմիթ ձեռքերը վեր առած էր ու կ'երերցնէր ազատ, համարձակ, ուղածին պէս, իր ճառին բոլոր պահանջումներուն համեմատ. այս անգամ իր անագին թաթը մօտեցնելով քովիկը նստած գեղանի ու մոտ կնիկան մը զոր ոչ ոք տեսած էր մինչեւ այն ատեն, ցոյց տալով զայն դատաւորներուն, սեւ մաշիկի մը ու կարմիր զարդերով շտկուած քաջ գլխարկի մը տակ, յուզուած ու կարմրած, գրեթէ պարծենալով այսքան բազմութեան ի տես ելլելուն, փաստաբանն այս հանգոյցը կը լուծէր մէկ բառով.

— Ահաւասիկ Բերուզ հանձնին անմեղութիւնը հաստատեցի:

Իօ֊Փ...

Գարրիէլ Ներշապուհ միջին եզրը կը ներկայացնէր ազգին երեք չափագէտներուն մէջ:

Թուաբանութիւնը՝ վտիտ ու թափանցիկ Միւսիւ Բասքալով մարմնացած, հետզհետէ կ'ստուարանար, վայելուչ ձեւ մը կ'առնէր Ներշապուհի մօտեցած ատեն, բոլորովին գունատ, դէր ու կըր բան մը դառնալով Սիմոն Միքայելեանի քով ուր կը վերջանար:

Բասքալ իր նիհար մարդու զուարճախօսութիւններն ունէր, Սիմոն Միքայելեան ծանրաշարժ ու գիրուկ լրջութիւն մը և Ներշապուհ չեղք երկիր մը կ'ըլլար երկու հակառակորդներուն մէջտեղ, նրբամիտ ու պատկառելի դասախօս մը լինելով:

Թուիս ու գեղեցիկ դէմքէն, ճախ յօնքին վրայ ցցուած ուռ մը աչքի կը զարնէր, աշակերտներուն դիտողութիւնը կը հրաւիրէր, առանց նուազեցնելու իր ազդած համակրելի տալաւորութիւնը. ընդ-

հակառակն ուսուցիչի յատուկ դրոշմը կուտար այս ցից ու կըր մտակոյտն որ դասախօսին ճակտէն կը մեկնէր իբրեւ տնոր խելքին մէկ մասն անհամբեր դուրս նետուելու, դիմացիին հասնելու ու հաղորդուելու համար:

Յօնքին այս առանցութեան (relief) տակ աչքը կը թաղուէր, կը խորասուզուէր, բայց ցոյց տալով այդ մութէն իր զօրեղ շառաւիղները:

Ես իր պէտքերը կը սիրէի ու իր պաշտօնները. պէտքերը թաւ, լայն, ոլորուն, զօրապետի մը վայելուչ, որ իր դէմքին դասախօսներու սովորական կեղծաւոր դէմքէն բոլորովին տարբեր, համարձակ երեւոյթ մը կ'ընծայէին:

Թուարանական անվերջանալի խնդրոց մէջէն որով կ'ողողէր զմեզ. դեռ կը դիտեմ իր հեզ ու համբերող դէմքը, մարտիրոսի դէմք մը:

Հռովմէականաց վարժարանին մէջ ուր կը դասախօսէր առաջին Լուսաւորչականն ըլլալով, տնօրէնին՝ տօքթօռ Շիշմանեանի ազատասէր ոգւոյն ու Անդիներուն ակամայ հայտարարութեանը կը պարտէր այս պաշտօնը:

Իր աշակերտներն որք կը սիրէին իր շուրջը բոլորուիլ, ցիրուցան են հիմայ. ոմանք, թերեւս լաւագոյնները, մեկնեցան ժամանակէն առաջ. ու մենք անոնց թողած պարապը չի կրնալով ընուլ, ի զուր ջանալով սեղմել մեր բաց մնացող գիծերը, մենք ալ կը յառաջանանք մեր կարգին սպասելով:

Գ. ԶՕՀՐԱՊ

ԴԻՄԱԳԾԵՐ

ԱՐՈՒԵՍ ՏՍԱՆԴԻՍ ԳՆԱՅՈՂ, ԿՈՎԿԱՍՅՈՆ

Պոլսէն անցնելով Բարիզ Արուեստահանդէս գնացող Կովկասցիին իր ծառայութիւնները մատուցանելու համար Պ. Գրիգոր Գալֆայեան ամէն առաւօտ արեւի ծագելէն առաջ մակոյկով կ'սպասէ: Հայ շէնքերը մաքսատան դէտէ մը աւելի աջալուրջ կը հսկէ Սեւ ծովի ռուսական նաւահանգիստներէն եկող շոգենաւներուն. շատ անգամ, չըսելու համար միշտ, Պ. Գալֆայեան ետ կը դառնայ յուսախար. ոչ ոք: Բայց երբ Բաքէի շոգենաւը կ'երեւի, վստահ է թէ նոյն օրը պիտի կարենայ ուղեցոյց ըլլալ Կովկասցիներու պատկառելի քանակի մը:

Այո՛ ամէնքն ալ կուգան Բաքէի շոգենաւով — կամ ինչպէս իրենք կ'ըսեն «Պակէթով» — ազգասիրական պարտականութիւն է:

— Մենք էլ, եղբայր, մի բան անինք նրանց համար, նրանք էնքան բան են առում մեզ համար, կ'ըսեն:

Եւ արդարեւ Բաքէի ընկերութիւնը կը կոչուի Société Arménienne et Marocaine «Հայ և Մարոքեան ընկերութիւն» իր շոգենաւներէն մէկին անունը Աբդէ է, Լորիս Մելիքովի մարմինը այդ ընկերութեան շոգենաւով փոխադրուած է ի Պաթում, և ընկերութեան ծանուցումները կը հրատարակուին Մշակի մէջ. «էլ ի՞նչ պէտք է» որ Բաքէի ընկերութիւնը յաջս Կովկասցի Հայուն համարուի մասն և բաժին ազգային հիմնարկութիւններու:

— Մեր ազգութիւնը պահպանվում է երեք բանով, կ'ըսեն Կովկասցիները, եկեղեցիով, ուսումնարանով, Պակէթով:

Լոյսը ճեղքուելուն պէս կ'ելլեն շոգենաւէն. կ'ուզեն երթալ «իրենց — այսինքն Մշակի — Պոլսի մշտական թղթակցի մօտ» Պ. Գալֆայեան կը տանի զիրենք անոր գրասենեակը. բայց նա տակաւին չէ եկած. կը զարմանան իրենք Պաթումէն կուգան ու Պոլսեցիք դեռ անկողինն են: Մի քանի ժամ վերջ Հայկակ ներս կը մտնէ. զիրար կը համբուրեն. սրտով ծանօթ են իրարու:

Մի քիչ հարցութորձէ և սուրճ խմելէ վերջ կը պատրաստեն Պրօքսման, որ է ծրագիր: Նախ պիտի տեսնեն Հայրիկը. կովկասցին որ Պոլիս կուգայ և կը մեկնի Հայրիկի աջը չհամբուրած, կը նմանի ուխտաւորի մը որ կ'երթայ Երուսաղէմ և կը վերադառնայ առանց համբուրելու. Գրիտտոսի գերեզմանը:

Հայրիկէ վերջ պէտք է ուխտի երթան Ներսէս Պատրիարքի շիրմին. ապա պիտի տեսնեն Այա-Սօփիան, Վոսպորը, Կղզիները. պիտի այցելեն Պոլսի «նշանաւոր գործիչներին»: Հայկակ կ'ըսէ թէ մէկ շաբաթուան համար առ այժմ այդքանը կը բաւէ: Կը զարմանան: Ի՞նչ մէկ շաբաթ. նոյն իսկ երեկոյեան շոգեկառքով պիտի մեկնին: Ի զուր Հայկակ կը ջանայ համոզել զիրենք թէ միայն Հայրիկը տեսնելու համար երկու երեք օր պէտք է: Չեն կարող հաւատալ: Միթէ Հայրիկ Պոլսի մէջ չէ՞:

— Այո, Պոլսի մէջ է, բայց ո՞վ գիտէ թէ ուր է: Իւսկիւտար, Խասգիւլ, Կըլզինեւր, Պէօլիւք-տէրէ:

Բայց միթէ այդ տեղերն ալ Պոլսի մէջ չեն. ուրեմն կ'ըսեն «կառք մը վեր առնենք և դնանք ամէն տեղերը գտնել Հայրիկին»: Անկարելի կ'ըլլայ զիրենք համոզել թէ հնար չէ մէկ երկու ժամուան մէջ Պէօլիւքտէրէէն Իւսկիւտար, անտի Խասգիւլ կամ Մաքրիգիւլ անցնիլ ու Հայրիկ փնտռել: Համոզելու ուրիշ միջոց չ'ըլլալով իրենց կ'առարկուի թէ դուցէ Հայրիկ կղզիներն ըլլայ, և ինչպէ՞ս կղզիներն երթալ:

— Դեհ, պարագայով գնանք, կ'ըսեն:

— Բայց միշտ շոգեկառք չկայ:

— Ի՞նչ էք ասում. դէհ, գնանք այն պատիկ բանով որը մեզ առաւօտուն պարախօտից դուրս բերաւ: — Բսել կ'ուզեն

ասնաբառ:

Հայկակ կը ջանայ զիրենք համոզել թէ ասնաբառով կղզի երթալ դաւ չ'ըլլար. թէ նոյն իսկ շոգեկառքով գնալ դաւու համար մի օր պէտք է: Չեն հաւատար. կը կարծեն որ կը ծաղրուին:

— Մէկ օրից Վիէննա ենք գնում, կը գոչեն:

Գրասենեակէն դուրս կ'ելլեն ճորտագլի սկսին գործադրել իրենց ծրագիրը. բայց

«սոված» են—այսինքն անօթի: Կ'երթան Ղալաթիա հայու ճաշարան մը: Տեղական ուտելիք կը փախագին:

— Բիւլաւ կ'ուզէ՞ք:

— Բըլաւ մեր երկրումն էլ կայ:

— Տօլմա՞:

— Տօլմա մեր երկրումն էլ կայ:

— Միտեա՞:

— Դա ի՞նչ բան է որ:

— Տեսակ մը սեւ ոտորէ:

— Դա մեր երկրումը չկայ. ինչ որ չենք տեսել մեր երկրում չենք ուտում:

Ուրեմն պէտք է գտնել ուտելու մի բան որ իրենց երկրի մէջ թէ ըլլայ և թէ չ'ըլլայ: Այս պահանջում գոհացնել դժուարին ըլլալով այսպէս թէ այնպէս մի պատառ բան կ'ուտեն արագ արագ: Միայն թէ գինիին շատ հաւնած են: Այդպէս գինի իրենց երկիրն ալ չկայ: Երբ գինին կը լեցնեն դաւաթը, վրան «պստիկ պըստիկ աստղներ են պլլլլում»: Հայկակ ինքն ալ կ'ուզէ համը նայիլ. տարօրինակ համ մը. ձէթի համ. կը նայի դաւաթին մէջ, այո «պստիկ պստիկ աստղներ պլլլում են»: Տարակոյս չկայ թէ չէ՞նք եսլէ է: Կամայ մը կը հարցնէ ուսուսուորին թէ ի՞նչ է այս: Սպասաւորը ներողութիւն կը խնդրէ. գինին տճապարանօք չէ՞նք եսլէ չիչերուն մէջ լեցուցեր է:

Եւ կը շարունակեն խմել ու սքանչանալ:

— Ինչ և իցէ, ձեր երկրումը գոնէ մի լաւ բան կայ. էդպէս գինի մենք էլ չուենք:

Շուտ կը վերջացնեն ճաշը. կ'անցնին Պոլիս. կ'սկսին Հայրիկ փնտռել. անհնարին է գտնել զնա. Հայկակ կ'ըսէ թէ Իւսկիւտար մարդ խրկած է, կ'իմանան թէ ո՞ւր տեղ է. յուսալիլ կառք կը նստին և կը հասնին Այա-Սօփիան: Պ. Գալ Փայեան ներս կը մտնէ և քիչ մը վերջ լուր կը բերէ թէ իւրաքանչիւր այցելուի համար պէտք է վճարել տասն և հինգ դահեկան: Այս լուրի վրայ զարմացած կը մնան. չեն կարող ըմբռնել. անգամ մը եւս կը հարցնեն. յետոյ իրարու երես կը նային: Ի՞նչ կը նշանակէ այդ. կ'ուզեն իմանալ թէ տասն և հինգ դահեկան ի՞նչ կ'արժէ իրենց փողով. «մէկ բուսլիէ մի քիչ աւելի» կ'ըսուի իրենց: Քարացած կը

կենան. գլուխնին կ'երերցնեն: Ստակ վը-
ճարե՞ն. բայդ այդ տնկարելի է:

— Մեր երկրում մուգէների մուտքը
ձրի է, կը գոչեն:

Իրենց կ'առարկուի թէ քանի որ եկած
են այնքան հեռու որ տեղէ, պիտի եր-
թան Բարիլի արուեստահանդէսն, այդ-
քան ծախսի մէջ մէկ բուսկի աւելի մէկ
բուսկի պակաս մեծ բան չէ: և կ'արժէ
տեսնել Այա-Սօփիան:

Այս դիտողութեան վրայ կը նեղանան.
գարմացած իրարու երես կը նային. ի՞նչ
խնայողութիւն. այդ իրենց մտքէն ալ չէ
անցած: Ո՛չ, ց՛չ. սկզբունքի համար է որ
չեն ուզեր վճարել, և ոչ թէ չնչին գու-
մար մը խնայելու նպատակաւ: Իրենց երկ-
րի սկզբունքն է թէ հանրային չնքերու
մուտքը ձրի է:

Իբր գործնական ապացոյց այս համո-
զումի մին թղթապանակէն կը հանէ եր-
կու բուսկի, կը պատուէ, կուտայ հովին:

— Արի Գրիգոր Զան դու էլ. Ստե-
փան Զան դու էլ. Կարապետ Զան դու
էլ. դու էլ, դու էլ:

Ամենքը հանդիսաւոր կերպով երկու-
քական բուսկի կը հանեն կը պատուեն ու
կը նետեն:

— Տեսնում էք թէ մենք խնայողու-
թեան համար չէ այլ սկզբունքի համար
որ չենք վճարում: Խօ, մենք Պոլսեցի
հոսկոս չենք որ սկզբունքից, ուղղութե-
նից զուրկ լինենք. մենք սկզբունք ու-
նենք, մենք Մշակ ենք կարդում. դուք
Մշակ չունէք, ուղղութիւն չունէք: Դէհ
գնանք:

Կը մեկնին. բայց ոտքերնին առաջ
չերթար. մի քանի վայրկեան հիացած կը
մնան Այա-Սօփիայի հանդէպ. կ'ափսոսան
որ կարող չեղան տեսնել այդ հիանալի
չնքը, թէ պէտէ վաթսուն դահեկան տուին
կառքի մը հոն երթալու համար:

Անտի ուղղակի Պատրիարքարան կ'իջ-
նեն. ճանապարհին մէկ բառ չեն արտա-
սաներ. այնքան տխուր են:

Պատրիարքարան հասնելով կ'ուզեն
ներսէս Պատրիարքի շիրիմը տեսնել. կ'եր-
թան Մայր Եկեղեցի. ի տես գերեզմանին
կը բանան գլուխնին երկիւղածութեամբ.
կ'աղօթեն զգածեալ. յետոյ կը խոնար-
հին, կը տարածուին սակողջ մարմնով, կը

համբուրեն գերեզմանը, և մխիթարուած
սրտով կ'ելլեն. աչքերնին արցունքով լե-
ցուն է:

Պոլսի միակ բանն է այդ շիրիմը Հայ-
րիկի հետ միասին որոց հանդէպ Կովկասցին
քննադատութիւն ընելու սկզբունքը զրհէ:

Մեկնելով եկեղեցիէն կ'ուզեն շրջա-
տեսնել. ոտքով կ'սկսին գնալ. Կէտիկ-
փաշայի դարիվերը ելլելով երբ կը մտնեն
նեղ փողոցն ուսկէ չարչը պիտի երթան,
յանկարծ կանգ կ'առնուն բանջարեղէնի
խանութի մը առջեւ, հիացած կը կենան:

— Ա՛խ, ի՞նչ մեծ էջեալ կը գոչեն.
տես էդ էլ մեր երկրում չկայ:

— Ի՞նչ խըյեար, ո՞ւր է:

— Տես այդ կախը:

— Եղբայր, այդ դուռն է, ա՛մա գաղտնի
կ'ըսենք:

— Այդպէս դուռն կը լինի՞:

— Էյ այդպէս էլ էջեալ կը լինի՞:

Անհնարին կ'ըլլայ գիրենք համոզել որ
այդ դուռն է և ոչ թէ վարունդ. Կը
պնդեն թէ մէկ հատ առնեն, այնտեղ ու-
տեն համը տեսնեն. «ախր փողը մենք ենք
տալիս» կ'ըսեն:

Ի՞նչ ընել. վերջապէս բռնի կը հեռա-
ցնեն զանոնք սոյն տեղէն. բայց առանց
համոզելու թէ տեսածնին վարունգ չէր:

— Ախր, ինչո՞ւ մեզ էդպէս ծաղրում
էք. ուզում էք որ խըյարը մեզ դուռն
հաւատացնել տաք. դուք մեր երկիրը գա-
լիս մենք ձեզ էդպէս բան չենք անում.
ձեզ չենք ծաղրում:

Եւ վշտացած կը մտնեն չարչըն: Այդ
տեղ վէճը կ'սկսի իրենց միջեւ. մին կ'ըսէ
թէ «իր երկրումն էլ կայ էդպէս չարչու.
չարժէ տեսնել»: Միւսը կը պատասխանէ.

— Տօ՛, տխմար, քո ամբողջ երկիրը այս
չարչուի կէսը չէ, ո՞ր տեղաց այդպէս
չարչու ունէք:

Վէճը կը սաստկանայ: Այդ միջոցին
Աբե-եւթ ծախողները կ'անցնին, Հայկակ
մէկ հատ կ'առնէ, կը բանայ երկրորդ երեսը
և ազգայիններու մէջ ցոյց կուտայ թէ դըր-
ուած է իրենց անունը, մտկանունը և Պո-
լիս դաւերնին: Չեն հաւատար. իրենք ալ
կը կարդան և ձեռքէ ձեռք կ'անցնեն:

— Տօ՛, մենք ո՞վքեր ենք որ մեր գալուս-
տը դրած են. ո՞ր տեղաց էլ իմացել են.
Մշակ էդպէս բան չի՛ անի. Ուղիղ ասած

